

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ս. ԵՂԵՍՅԱՆ

ԿՈՆԽՈՋԸ ԵՌՆԵՐՈՒՄ

„ԿԱՐՄԻՐ ՀՈԿՏԵՄԲԵՐ“ ԿՈՆԽՈՋԸ

338.14.

5-70

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴ, ԿՆՆՏՐՈՆ, ՀՐԱՑԱՐԱԿԱԶՈՒԹՅՈՒՆ
Մանկիկ XXXXXXXXXXXXXXXXXXXX ԹԻՖԼԻՍ

**ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎԻ ԲՍԺԱՆՄՈՒՆԲ**

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. Ա. Անդրեյևի.—Սոցիալիստական շինարարության նոր ետապը 6 4
2. Կուրբեյլո.—Կուրաիր կոլտոզի թշնամի 5 »
3. Գյուղատնտեսական կոմունայի կանոնադրություն 2 »
4. Սեայիճ.—Պատասխան ընկեր կոլտոզիկներին 5 »
5. Մ. Գիգոյան.—Կոլտոզների մասին 6 »
6. Վ. Իվանով.—Նոր ետապում 5 »
7. Գյուղատնտեսական արտելի կանոնադրություն 2 »
8. Կնոջ աշխատանքը կոլտոզում 8 »
9. Ա. Անդրեյևի.—Հյուս. կովկ. գյուղատնտեսության օրգանիզացիայի
ուսցման խնդիրները 2 »
10. Կալեիճ.—Ինչպե՞ս կազմակերպել և զարել կաթնասնանու
թյունը կոլտոզներում 8 »
11. Ա. Անդր.—Սոցիալիստական շինարարության դոտում 8 »
12. Հյուս. կով. Յերկր. ծխախոտագործական միության դիմումը 2 »
13. ՀԳ(Բ)Կ Կենտկոմի աշխատանքը (ընկ. Վորաշիլովի ղեկավարումը) 15 »
14. Ա. Հովհաննիսյան.—Երգ մարտական փորձի (բանաստեղծու
թյուններ) 20 »
16. Հյուս. կով. յերկրային 6 կուսկոնֆերենցիայի բանաձևերը 8 »
15. Զարգացրե՛ք կենդանարուծաթյունը կոլտոզներում 3 »
17. Յեզիպտացորենի կուլտուրան Հ. Կ. 6 »
18. Միկուլա.—Դեպի նոր կենցաղը կոլտոզներում 5 »
19. Սկոժորոխով.—Պաշտպանեցե՛ք անասուններին վարակումից 5 »
20. Գոլզովսկի.—Առաջին օդնոթյուն հիվանդացած գյուղ. կեն
դանիներին 6 »
21. Հնգամյակի յերրորդ տարվա շնամբին 16 »
22. Գյուղատնտեսական միասնական հարկը և գ. ա. սոյ. վերա
կառուցումը 10 »
23. Յա. Տեյնով.—Ինչպե՞ս կազմակերպել խոշոր կոլտոզի անտե
սությունը և նրա զարչությունը, 1-ին պրակ. 8 »
24. Նույնը, 2-րդ պրակ 4 »
25. Նույնը 3-րդ պրակ 7 »
26. Ս. Գ. Բաստանցյան.—Անասնաբուժական կոլտոզի և նրա
մասնակյուղերի կառավարումը 20 »
27. Ա. Մինարդի.—Ուրբերները վերջնաբուժյունների հիմնական
խնդիրները 7 »
28. Ուրբերները վերջնաբուժյունների գործնական խնդիրները 8 »

1007
1868
32595

1964.04.16

17 FEB 2010

Ս. ԵՂԵՏԵՆ

338-14
5-70

ԿՈԼԽՈԶԸ ԼԵՌՆԵՐՈՒՄ

„ԿԱՐՄԵՐ ՉՈԿՏԵՄԲԵՐ“ ԿՈԼԽՈԶԸ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Օրակա ՌՈՍՏՈՎԻ



КОЛХОЗ В ГОРАХ

ОЧЕРК

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР
МОСКВА 1931—V РОСТОВ

Уполкрайлит № 2832. Ростов на Дону.

Газ.-кн. тип. СККПО Ст.-ф. Б 6 125x176 Зак. № 2153. Тираж 2000

ՀՐԱՏԱՐԱՆԿՉՈՒԹԱՆ ԿՈՂՄԻՑ

Հեղինակ Եպտեյնն այս գիրքը գրել է 30 թ. ամառը: Գրքի թարմությունը պահպանելու համար մենք արել ենք վորոշ լրացումներ, վորոնք վերաբերվում են 31թ. փետրվար-մարտ ամիսներին:

Այս ժամանակամիջոցում «Կարմիր Հոկտեմբերում» զգալի փոփոխություններ տեղի չեն ունեցել: Փոխվել են դեմքերը և մանավանդ աշխատանքի հաշվառման և գնահատման ձևերը: Կոլխոզում մտցվում է գործարքային սխառն, վորը կոչված է մեծ դեր կատարելու աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու ասպարիզում: Հիմնականում կոլխոզը ծավալուն կերպով շարունակում է իր աշխատանքները:

Անկախ կոլխոզում յեղած առանձին փոփոխություններից և թարմության խնդրից, Եպտեյնի այս աշխատության արժեքը կայանում է նրանում, վոր նա մտաւոր գծերով թեկուզ, «Կարմիր Հոկտեմբերի» որինակով տալիս է կոլխոզաբժման պատկերը Հ. Կովկասի հայ աշխատավոր գյուղացիության մեջ:



Դուք հարցնում եք, թե ի՞նչպես կարելի յե «Կորմիբ Հոկտեմբեր» կոլեկտիւն ընկնել:

Յեա ձեզ սիրով կպատմեմ:

Նախ պետք է Հչուս. Կովկասի յերկաթուղազօծով հասնեք մինչև Լոռ կայարանը, իսկ այդտեղից լեռնային նեղ շավիղով 6—7 կիլոմետր գնաք և դուք կհասնեք Վերին Հայկական Լոռն, վորտեղ գտնվում է կոլեկտը:

Զգուշացնում եմ՝ այդտեղ գնալը թեպէտ գրավիչ է, բայց վոչ այնքան հեշտ:

Նեղ շավիղը, վոր այտտեղ «ճամբա» յե կոչվում, ձգվում է Լոռ գետակի ափով դեպի վեր և լեռնային՝ գետակի նման ծովում է:

Գետակը ծանծաղ է:

Նա մեկ աղմկում է և ծածկում քարերը, մեկ լուռ և ծուրընն թավալում իր ումրողչ հունով, անկարող լինելով մի անգամից քշել նույնիսկ ամենամանր քարերը, վորոնք խիտ կերպով յերևում են ջրի տակ: Այդպիսի տեղերում գետակը թվում է պատահաբար թափված ջուր, վորը դեռ չի կարողացել ձծվել՝ չորացած հողի մեջ և ճանապարհ է փնտռում թեկուզ մի փոքր ևս հոսելու:

Դուք գնում եք գետակի հոսանքն ի վեր, մաղլցում եք ցանկապատներով, զգուշորեն անցնում եք գետակի վրա ընկած գերաններով, վորոնք ծառայում են վորպէս կամուրջ, հաճախ թռնում եք ջրից հղկված քարերի վրայով:

Ձեզ թվում է, թե այդ թռչկոտարուն վերջ չի լինելու, թե այդ շավիղը ձեզ վոչ մի տեղ չի հասցնելու: Սակայն

դա անսովոր լինելուց է: Կովկասում ճանապարհները նույնքան հարմար են տեղական բնակիչների համար, վորքան տափաստանները տափաստանային բնակիչների համար: Յեվ յեթե դուք հողնեղ եք, կամ մի քիչ ավելի ճանապարհ անցել, ապա դա միմիայն այն պատճառով, վոր դուք չեք իմացել, թե վերտեղ հարմար եր անցնել գետակը՝ տեղ հասնելու համար:

Շուրջն ամենուրեք փարթամ բուսականութուն է:

Վերևը, լեռներում—կան կաղիւններ, հաճարի նոճի: Ստորտներում՝ դանազան թփեր—մասրենի և այլն: Կանաչ և խիտ խոտերից հետո գալիս են կիսավայրենի պլուզատու ծառեր, վորոնք թեպէտ զուրկ են մարդկային խնամքից, բայց չեն մոռացվել բնության կողմից:

Հանկարծ դուք տարակուսանքով կանդ եք առնում:

Ձեզ զարմացնում է, վոր գետակի ափին անշարժորեն ցցված են դոմեշների գլուխներ:

Ձեղ թվում է նույնիսկ, վոր գլուխները բաժանված են իրանից: Այնինչ դա այդպէս չէ:

Աչքերը կիսախուսի, համառ պոզերը ցցված յերկու կողմից, նրանք ազանորեն ձծում են ջուրը, հազիվ նկատելի բշտիկներ արձակելով:

Դուք հանդիստ կերպով կարող եք անցնել նրանց մոտով, նրանք չեն ցնցվի և տեղերից չեն շարժվի:

Գոմեշները հանդատանում են ընտրելով խորը տեղեր:

Յերևիկը, յերբ արեն անառնելի կերպով այրում է, դոմեշներին արձակում են և ազատ թողնում: Նրանք իսկույն վազում են դեպի ջուրը, մտնում և պառկում ջրի մեջ, մինչև տերը գալիս և վայտով հիշեցնում նրանց իրենց անմիջական պարտականութունների մասին:

Դուք անցնում եք Ներքին-Լոռ գյուղի միջով:

Բայց սա այն գյուղը չէ, վորին մենք սովոր ենք կենտրոնական Ռուսաստանում կամ Ուկրաինայում:

Այստեղ չկան վոչ փողոցներ, վոչ նրբափողոցներ
և վոչ ել ուղիղ դասավորված բակեր:

Տներն ընկած են այս ու այն կողմը, մոտակա բլուր-
ների վրա և թվում է թե անա նրանք վայր կզլորվեն:

Տների շուրջը քաշած ցանկապատերի վրայով անց-
նում են բոլորը: Ավելի անհարմար տեղերում նույնիսկ շին-
ված են յեղարաններ: Այս տեղերում ցանկապատն ավելի
շատ ծառայում է վորպես «մասնավոր սեփականության»
արտաքին ձև և վորոշ չափով միայն վորպես պատենչ-
անասունների դեմ: Ուրիշ բանի համար այստեղ ցանկապա-
տեր պետք չեն:

Տոթ է...

Արևն իր շիկացած հնոցից թափում է հալած մետաղ,
Գետակը հոսում է ծուլորեն, հեռվից հիշեցնելով իր
մասին խեղդված աղմուկով:

Ծառերը լուռ կախել են իրենց գլուխները, սպասելով
փոքրիկ քամու...

Իսկ շավիղը ձգվում է վեր և վեր...

Շավիղը նեղ է, անհարմար և կեռումնու:

Հանկարծ ինչ վոր տեղից լավում են ձայներ:

Ականջիդ է հասնում լեռնական առողանությամբ հա-
տու խոսակցություն:

Լավում է մանկական լացի ձայն:

Ձեր առաջն է՝ Վերին Հայկական Լոռն:

Ձեր առաջն է «Կարմիր Հոկտեմբեր» կոլխոզը:

* * *

Ամեն մի կոլխոզ գետի նման արագացնում է իր ըն-
թացքը, խորացնում հունը, լայնացնում իր ափերը և միա-
խառնվում այլ կոլխոզ—գետերի վտակների, վորպեսզի վեր-
ջապես, դառնա անծայր, անսահման, անտակ մի «ծով», վորը
հոչվում է «Համաշխարհային Կոմունա»:

Յեթե դուք կամենում եք իմանալ կոլխոզի պատմու-

թյունը, գնացեք նրա հոսանքով դեպի վեր, հետևեցեք նը-
րա բոլոր շրջադարձերին, դիտեցեք ակունքները:

Կատարեցեք այդ շուտ:

Վորովհետև կանցնեն տարիները և այսօրվա կոլխոզ—
առվակները կբառնան ջրառատ և արագահոս գետեր:

Իսկ կոլխոզ—գետը կլուծվի իր նման բազմաթիվ կոլ-
խոզների շարժման մեջ: Կիտխվի նրա նախկին հունը: Կը-
փոխվեն և ափերը: Յե՛վ կարող է պատահել, վոր նրա ա-
կունքները ծածկվեն ժամանակների ավազներով:

Ուսումնասիրեցեք այժմ և յեթ:

Ուսումնասիրեցեք շուտ:

Ձե՛ վոր կոլխոզներն արագորեն փոխում են իրենց
պատկերը

Միության ամեն մի անկյունում ստեղծվում են կոլ-
խոզներ:

Յերկրում ծավալվել է աշխարհում չտեսնված կոլեկ-
տիվիստական շարժում:

Նրանց լուրը կազակային ստանիցաներից և ուկրա-
ինական խոտորներից հասնում եր մինչև ձկնորսական
ավանները, չերքեղական առւելները և լեռնային գյուղերը:

Գյուղացիական անտեսությունների կոլեկտիվա-
ցումը դարձավ դասակարգային այն ինտերնացիոնալ շաք-
ժումը, վորը ի մի համախմբեց լայնածավալ Միության չքա-
վոր—միջակային բոլոր մասսաներին:

Կարելի չէր չիմանալ կոլխոզի կանոնադրությունը,
կարելի չէր չիմանալ կոլեկտիվացման նվաճումները, սա-
հայն բավական եր լեռների բնակիչ—Վերին Լոռյի հայերին
իմանալ կոլխոզների սկզբունքների մասին, բավական եր
նրանց իմանալ կոլեկտիվացման հարցում կուսակցության
աարած քաղաքականությունը, յերը նրանք ևս սկսեցին ի-
րենց գյուղում հիմք դնել կոլխոզի:

Կեղծությամբ է բուրբում այսպես կոչված՝ «մտերիմե-

րի» հայտարարութիւնը կողեկտիվացման արհեստականութիւն մասին:

Ի՞նչպէս չարամտութիւններ են մեր թշնամիների այն հայտարարութիւնները, թե իբր դյուզի կողեկտիվացման ժամանակ գործադրվել են հատուկ մեթոդներ:

Նրանք, հոգեպես ազատացած այդ քաղաքագետները և քաղաքական պնդերեաները չեն հասկանում, վոր մասայական կողեկտիվացումը նախապատրաստված ևր մեր յերկրի զարգացման ամբողջ ընթացքով, կուսակցութիւնն նախորդ ամբողջ քաղաքականութեամբ և աճում ևր խորհրդային պետութիւնն ու պրոլետարիատի դիկտատուրայի ամբողջ սխտեմով:

Կողեկտիվացման մասին խոսում էյին բոլորը:

Կայծակի արագութեամբ տարածվում էյին լուրերը, վորոնք մերթ ուրախալի էյին և կենսալի, մերթ չարամիտ և աստի:

Ռայոնից դալիս էյին մարդիկ: Կենտրոնից դալիս էյին լրագրներ: Լոռիցիները գնում էյին քաղաք և ամենուրեք լսում էյին նույնը.—

Կոլխոզների մասին:

Այն ժամանակ և Դավլաշյանը և Առաքելյանը և ուրիշ չքավոր ակտիվիստներ սկսեցին շրջել տնից-տուն: Այն ժամանակ նրանք սկսեցին պնդել.—

—Ստեղծենք կոլխոզ. հրաժարվենք անհատական տընտեսութիւնից:

—Շտապելու հարկ չկա: Սպասենք: Տեսնենք ինչպէս են հարեաններն ապրելու—պատասխանում էյին նրանց ծերերը, ավելի թերահավատներն ու պահպանողականները:

—Կարիք չկա հարեաններին նայելու: Թող ուրիշները մեզ նայեն: Ստեղծենք կոլխոզ—համաւորեն պնդում էյին առաջինները:

—Պետք չէ մեզ կոլխոզն—ասում էյին նրանք, վորոնց հաճելի չէր կոլխոզը:

Յե՛վ ծավալվեց պայքարը: Ամենախկականը, դասակարգայինը:

Սկզբում նա տարվում ևր խոսակցութիւնների միջոցով:

Կուլակները և նրանք, վորոնք կապված էյին նրանց հետ, ոգնութիւն էյին կանչում «դատողութիւնը», «փորձառութիւնը», «բարեմտութիւնը». ապացուցում էյին, վոր կոլխոզները գոյութիւն պահել չեն կարող, թե ճիշտորէ կարելի չէ մշակել միայն անհատապես:

Չքավորները հակահարված էյին տալիս:

Փաստեր էյին բերում հարեան գյուղերից և այլ կոլխոզների փորձից: Որինակ էյին բերում իրենց դաժանագին շահագործվածութիւնը հարուստների և կուլակների կողմից:

Այնուհետև խոսակցութիւններն սկսեցին այլ ընթացք ստանալ: Վեճերը դառնում էյին ուղղման, գործը քիչ ևր մնում կովի հասնի:

—Պետք չէ կոլխոզ.—թշնամբար գոտում էյին կուլակները, սպառնալով առանձին ակտիվիստների պատժել:

—Պետք չէ, պետք չէ—ձայնակցում էյին նրանց յինթակուլակները:

Բայց չքավորները համառ էյին: Միջակները նրանց պաշտպանում էյին: Յե՛վ կոլխոզի կազմակերպումն առաջ ևր ընթանում:

Մե՛ջ խանութից նաև հողաչափ Գուրանդան:

—Յե՛ս յեկիլ եմ ձեզ մոտ անհատական կարգով անցկացնելու հողաշինարարութիւնը—ասաց նա— խորհրդային իշխանութիւնը վոչ վաքի հանդեպ բռնութիւն չի գործադրում: Ամեն վաք կարող է ընտրել անտեսութիւն վարելու իր ուղած ձևը: Բայց յես ուզում եմ ձեզ ապացուցել, վոր միայն կողեկտիվ տնտեսութիւնն ապագա ունի, վոր միայն կողեկտիվ տնտեսութիւնը կազատագրի ձեզ ծանր, գյուղացեական աշխատանքից:

Շատ եր պատմում Գուբանդոն: Յերկար համոզում: Նրան պաշտպանում եյին նույն Առաքելյանը, Դավլաշյանը, Փեհլիվանյանը և ուրիշները: Ակտիվներն ավելի յեռանդով կպան գործի:

Վերջապես, անվստահութունը վերացվեց և տառա-նուններին վերջ տրվեցին: Յուզակազմակերպչին 12 անտեսութուններ:

Յեկ իրենց առաջին ընդհանուր ժողովում վորոշեցին կազմել «միացյալ հողագործական ընկերութուն» և կոչել այն «Կարմիր Հոկտեմբեր»:

Այսպես և դրվել 1929 թվի հոկտեմբերին այժմյան «Կարմիր Հոկտեմբեր» կոլխոզի հիմքը: Այսպես կատարվեց մի խումբ անհատական անտեսութունների փոխանցումը դեպի անտեսութան կոլեկտիվ ձևեր: Այսպես են ձևեր բերել լոռյեցիներն այն ուղիները, վորոնք հին, ճահճացած անհատական անտեսութանը տայիս են նոր ընթացք...

Կոլխոզները գոյանում են դասակարգային անհաշտ պայքարում և ծնվում են դասակարգային դաժան մարտերում:

Այստեղ ևս տեղի յե ունեցել դասակարգային պայքար: Այս կոլխոզի գեմքին ևս գոյացել են կնճիռներ:

Այդ կնճիռները տարբեր են՝ և խորը և մանր:

Այդ վաղաժամ աղոսները կոլխոզներում, ինչպես և առանձին մարդկանց դեմքին, ծառայում են վորպես ցուցա-նիշներ կրած պայքարի և տառապանքների:

«Կարմիր Հոկտեմբերը» ևս չի կարողացել խուսափել դասակարգային թշնամիների ցասումից, կոլխոզների հակառակորդները չարութունից և ատելութունից:

Չե՞ վոր դասակարգային պայքարը միշտ ել մնում և պայքար, վորքան ել փոխվեն նրա ձևերն ու արտահայտութունները:

Այնտեղ, վորտեղ կուլակը չի կարող գործադրել դա-

շույն կամ մահակ, նա դիմում և պայքարի ավելի «կուլտուրական» ձևերի: Ձևեր, վորոնք այնքան ել տեսանելի չեն հասարակ աչքի համար, բայց պակաս սրությամբ չեն ներգործում:

Յեթե չի կարելի հանդես գալ բաց կովում, ինչու չըդիմել հրահրության, կեղծիքի, բանբասանքի: Ինչու չխաբել խորհրդային և կուսակցական կազմակերպութուններին: Ինչու չներկվել և ձեռնալ տվյալ դասակարգին «հարազատ», «համակրող», «բարեկամ» մարդ:

Այդպես յեղավ և այստեղ:

Կուլակները ազդեցության տակ ընկած մի խումբ մարդիկ սկսեցին հրահրել, պղտորել մթնոլորտը, նպատակ ունենալով վիժեցնել կոլեկտիվ կազմակերպման գործը:

Սկսեցին տեղալ գանդառներ և դիմուններ վարչության նախագահ Գրիգոր Դավլաշյանի վրա, կոմյերխական բլիշի քարտուղար Վահան Առաքելյանի վրա, ուրիշ ակտիվիստների վրա:

Դիմունների մեջ հրեշտավոր մեղադրանքներ եյին բարդ-վում, թե Դավլաշյանը հակահեղափոխական և, մարդասպան, գող, միահեծան, Առաքելյանը—յենթակուլակ և, կազմալուծվող «ելեմենտ», բամբասող:

Կեղտոտ և լուստանքով լի 118 դիմուններ տրվեցին այն մարդկանց վրա, վորոնք ստեղծում եյին նոր գործ, մարդկանց դեմ, վորոնք հանուն կոլեկտիվի հրաժարվել եյին իրենց անձնական շահերից:

Յեկ դիմունները կատարում եյին իրենց գործը. նրանք ջղախանցում եյին ակտիվին, ստեղծում եյին անվստահութուն՝ թե յերբևե հնարավոր և ազատվել սկիւկայից: Այդ դրությունը սպանում եր ամեն տեսակի ինչիցատիվա:

Առաքելյանին նոյնիսկ հեռացրին կոմսոմոլից, դուրս արեցին կոլխոզից:

Կամաց-կամաց սկսեցին մոտենալ նաև ուրիշներին:

Բայց և այնպես, կուլակային գրոհը յետ մղվեց: Կրօ-
գրները սկսեցին լուսարանել պայքարի ելությունը: Կոլխոզ
յեկավ հեղինակավոր հանձնաժողով: Քննեցին: Յեվ հանձ-
նաժողովը յեկավ այն յեզրակացութեան, վոր դա դատարար-
պային թշնամու հերթական յելուցին:

Հերոսներն սարածողները մերկացվեցին: Առաքել-
յանին յետ ընդունեցին կոմյերխոմիսիայան շարքերը: Իսկ-
լաշյանը լիովին ազատված և զրպարտանքներից:

Այդ ժամանակամիջոցում ընկերությունը ձեռք բերեց
ստաժ, միևնույն ժամանակ և հեղինակություն: Անդամների
թիվն ավելացավ: Չարամիտ ծիծաղներն ավելի դուստ դար-
ձան: Կուլակային տարրերը շարունակում էին հանդես դալ
արդեն վոչ այնպես բացարձակ, թեպետ և վոչ պակաս ասե-
լությամբ:

Իսկ 1930 թվի հունվարին ընկերությունը վերածվեց
արտելի, վորն այժմ ընդգրկում և վերին Հայկական Լոռի
ամբողջ բնակչությանը, բացառությամբ մի հակահեղափո-
խականի ընտանիքի, վորը (հակահեղափոխականը) օքսոր-
ված և Սարավկի:

Միայն հետո, կոլխոզնիկների ակտիվ ջանքերով յերե-
վան բերվեցին հինգ կուլակային անտեսություններ, վորոնք
կսրողացել էին իրենց հատուկ ճարպկությամբ թագնվել
կոլխոզնիկի դիմակի տակ:

Կոլխոզի ընդհանուր ժողովը վորոշեց միաձայն.—

— Իուրս անել կոլխոզից, հարց հարուցել պետական
մարմինների առաջ, վոր նրանց հեռացնեն ուսյոնի սահման-
ներից դուրս, լիկվիդացիայի յենթարկին վորպես դասակար-
գի, վորպեսզի նրանք չկարողանան այլևս խանդարել սո-
ցիալիստական շինարարության գործը:

Արևը ծածկվում էր աստիճանաձև սարերի քամակը, թող-
նելով վարդազույն ճառագայթներ, գունաթափ յերկնակա-
մարով:

Անշուշտ բարձրանում էր յերեկոյի լուռ մշուշը:
Յերկայն, խիտ սովերներն ընկնում էին խաղաղ ան-
տասի և մարգերի վրա:

Լեռների գագաթներից մեկի յետևից գուրս յեկավ
ասաղը, փնտրելով կարծես իր տեղը:

Պաղաղ էր: Լեռները շարունակում էին պահել իրենց
մեջ խորը և մեծ լուսթյուն:

Միայն ձպուռները շարունակում էին իրենց միապա-
ղաղ կանչը և յերբեմն գիշերային թռչունը հիշեցնում իլ
գոյության մասին:

Մենք խմբովին նստել էինք կոլխոզի գրասենյակի
ասաջ:

Յերեկվա աշխատանքի հոգնածությունն իր գործն էր
կատարում, բայց վոչ վոք չէր ուզում հեռանալ:

Զրուցում էին որվա տպավորությունների մասին,
խոսում էին ծխախոտի հաջող բերքից, քննում էին առա-
ջիկա որերի կատարվելիք աշխատանքը:

Յես խնդրում եմ նրանցից մեկին—պատմեցեք, ի՞նչ-
պես եք դուք տպրում: Ի՞նչպես եք աշխատում: Ի՞նչպես եք
հաշվառման յենթարկում աշխատանքը: Ձե՛ն դժվարացնում
արդյոք ձեզ այս նոր, մինչև այժմ չտեսնված աշխատանքի
ձևերը: Ձե՛ վոր դուք կոլխոզ եք մտել չունենալով վոչ փորձ
և վոչ էլ մտելի որինակ:

Հաճույքով և մի առանձին պարծանքով ինձ պատաս-
խանում են: Այդպես են միշտ կարմիր հոկտեմբերցիները,
յերբ խոսք և լինում իրենց նվաճումների մասին:

Մինչև 1931 թվի հունվարը կոլխոզն ընդգրկում էր 54
ընտանիք 380 շնչով:

Կոլխոզի ամբողջ գոյության ընթացքում վոչ վոք կոլ-
խոզից չի դուրս յեկել:

Հարևան Ռուսական Լոռյում ևս կար կոլխոզ: Բայց
յեկավարությունը վատ էր: Անհաշտություններ կային: Ժ

մանակին չէյին կարողացել մեկուսացնել կուլակին: Յեվ կոլխոզը քայքայվեց: Ռուսական Լոռլից առանձին գյուղացիներ մի քանի անգամ դիմել են «Կարմիր Հոկտեմբերին», խնդրելով իրենց ևս ընդունել:

Հունվարի 22-ին, Լենինի մահվան 7-րդ տարեդարձի որը «Կարմիր Հոկտեմբերի» վարչութիւնը վորոշեց գործնականորեն անցկացնել:

Ռուսական Լոռլի գյուղացիների ընդհանուր ժողովում դրվեց «Կարմիր Հոկտեմբերի» տարեկան գործնութիւնի հաշվետվութիւնը:

Յեղան շատ արտահայտվողներ, քննեցին հաշվետվութիւնն ամենայն մանրամասնութեամբ: Կոլխոզի խոշոր նվաճումներն ակնհայտ էյին, կոլեկտիվ անտեսութիւնն առավելութիւնը հանդեպ անհատականի—միանգամայն համոզեցուցել:

Յեվ գյուղացիների կեսից ավելին տեղն ու տեղը դիմում տվեց «Կարմիր Հոկտեմբերին» միանալու:

Սա դեռ «Կարմիր Հոկտեմբերի» ամրապնդման առաջին քայլերն են. սա դեռ կոլխոզի աճման և հզոր կազմակերպութիւն դառնալու սկիզբն է:

«Կարմիր Հոկտեմբերն» գրադվում է ծխախոտագործութեամբ և այգեգործութեամբ:

Այստեղ մշակում են լավագույն տեսակի ծխախոտ, վորն արտահանվում է:

Այգեգործութիւնը սահմանափակ է, միայն մանր կաղինը (Ֆնդդ) ապրանքային նշանակութիւն ունի:

1930 թ. կոլխոզը ցանել էր 68 հեկտար ծխախոտ, այսինքն 20 հեկտար ավելի, քան 1929 թ. և 8 հեկտար ավելի պլանով նախատեսնվածից: Ցանել էյին նաև յեղիպտացորեն մոտ 50 հեկտար, մի փոքր ցորեն, խոտ և այլն:

1931 թվին կոլխոզն զգալի քայլ է անում ծխախոտի ընդարձակման ասպարիզում:

«Կարմիր Հոկտեմբերն» իր ծխախոտի ցանքերի տա-

րածութիւնը հասցնելու յե 102 հեկտարի: Ծխախոտի ցանքերի ընդարձակումը կատարվելու յե բացառապես ի հաշիվ անտառամաքման (կարչովկայի). այս դարուն կոլխոզը պետք է 30 հեկտար անտառ մաքրի: Դա վերին Լոռլի համար մասնավորապես անհրաժեշտ է բերքատվութիւնի բարձրացման տեսակետից, վորովհետև նրա հողերը չափազանց հին են և ուժասպառ:

Սրանից բացի կոլխոզը ցանելու յե նաև 75 հեկտար յեգիպտացորեն, 85 հեկտար խոտ, 7 հեկ. բանջարանոց և տնկելու յե 16 հեկտար նոր այգի: Շտորհիվ կոլխոզի յիռանդուն աշխատանքի, 31 թվի համար նախատեսնված այդ 16 հեկտար այգին կոլխոզը տնկել վերջացրել էր դեռ հունվարի սկզբներին:

Կար ժամանակ, յերբ համայնացրել էյին նաև հավերձ խոզերը և կովերը:

«Կարմիր Հոկտեմբերը» նույնպես իր «տուրքն» է տրվել շեղումներին:

Սակայն դա արագ կերպով ուղղվեց:

Ընկ. Ստալինի նամակը և հողվածներն իրենց գործը կատարեցին: Կոլխոզնիկները ժամանակին սթաիվեցին, հրաժարվեցին «հեծելազորային հարձակումից» և առանց ավել պակաս աղմուկի, արագ ու ճկուն կերպով վերակառուցեցին իրենց աշխատանքները և այդպիսով պահպանեցին ու ամրապնդեցին կոլխոզը:

Շատերին, հազարավոր և տասնյակ հազարավոր հեկտար հողի հետ գործ ունեցողներին, կարող է տարրինակ թվալ, թե դա ինչ կոլխոզ է 200-300 հեկտար ցանքերով, դա ինչ «կուստարութիւնն» է: Ու՞մն է ձեռնառու այդ «թղուկային» անտեսութիւնը:

Այդպիսի կարծիքը սխալ է և հիմնված է ծխախոտագործական անտեսութիւնը չգիտենալու վրա. ծխախոտագործական անտեսութիւնը խիստ կերպով տարբերվում է հացահատիկային և այլ անտեսութիւնից:

Այստեղ, հողային մի փոքր տարածութեան վրա կա-
րելի յի ստանալ բազմական առատ և յեկամտազոր կուլտուրա:
Բայց միեւնույն ժամանակ այստեղ հորկալոր են հար-
յութազոր բանվորական ձեռքեր, հարկավոր և մշտական,
համարյա չփոխարինվող աշխատանք:

Ծխախոտագործութեան մեջ սեզոնային աշխատանքը
համարյա բացակայում է:

Ծխախոտը պահանջում է աշխատանքի դործադրում
սկսած ապրիլից և վերջացած մինչև դեկտեմբեր-հունվար:

Շատ բարդ պրոցես է ծխախոտագործութեանը:

Խոսեցեք ծխախոտագործների հետ և դուք կհասկա-
նաք, թե վորքան բարդ է այդ կուլտուրան, վորքան շատ
աշխատանք է նա պահանջում մարդուց:

Ծխախոտը հեշտ կարելի չի ծխել, բայց բնութեանը
շատ դժվար է նրան պարզելու:

Ծխախոտի սերմերի հատիկներից սկսած մինչև դա-
նակները, պապիրոսները, կամ վոսկեթել կտրված բուրուս-
նավետ ծխախոտը—ընկած է չափազանց յերկար ճանապարհ,
փոքի ուղեկիցն է չափազանց դժվար աշխատանքը:

Ահա սրաարատովում է շիթիբանոցը: Այնուհետև դալիս
է հերկը—առաջին, յերկրորդ, հաճախ և յերրորդ հերկը:
Սպառ ապահանում են, հետո պարարտեցնում: Ինպի պարար-
տեցումը հողը շատ ազան է: Պահանջվում է շատ պարար-
տանյութ և այն ել սուպերֆոսֆատ. աղը նա չի սիրում:
Այնուհետև շիթիբն սկսում են անկել արտում: Իեռ չեն ուղ-
ղված մեջքերը, դեռ չի սրբված ճակատներից քրտինքը,
յերբ պետք է պղծեն քաղհանել:

Կատարվում է առաջին քաղհանը, ապա անմիջապես
յերկրորդը: Քաղհանից հետո սկսվում է բերքահավաքումը:
Ծխախոտը քնդում են 4-5 անգամ: Այդ քնդերը հենց բնո-
ւորում են ծխախոտի տեսակները: Այնուհետև դալիս է չո-
րանցումը, ապա փունջ կապելը, տեսակավորումը և հակ
կապելը:

Յեւ ամբողջ աշխատանքի ընթացքում տիրում է նի-
կոտինի խեղդող հոտը:

Նիկոտինը փչում է ծխախոտի արտերից, յերբ ցողուն-
ները ծածկվում են կանաչ, յերկարականջ տերևներով:

Նիկոտինը քաղի ժամանակ կաշնում է մարդկանց ձեռ-
քերին: Նիկոտինն ապականում է ողը, յերբ ծխախոտի տե-
րևները չորանում են, դեղնում, խորշում և մեջտեղի յե-
րակները կոպտանում են:

Ծխախոտը պահանջում է շատ մեծ ուշադրութեան և
շատ մեծ խնամք:

Նույնիսկ յերբ նա կապված է հակերում, դարձյալ
հանդիստ չի տալիս. պետք է բացել հակերը և նայել—չկան
արդյոք բորբոսանած կամ վարակված տերևներ, վորոնք ամ-
բողջ հակը կփչացնեն, չկան արդյոք նրանց մեջ վատ չորա-
ցած տերևներ:

Այս բոլորի վրա պետք է դուռնարել նաև այն, վոր
ծխախոտը, ինչպես և բոլոր բույսերը, ապահովված չէ վնա-
սատուներից:


Մեղվեղկա, սովկա, լարաձև վորդ—ահա նրա թշնամի-
ները: Այս բոլորը նստում են ծխախոտի վրա, խժոռում են
նրան, վոչնչացնում և հաճախ ամբողջովին կործանում ծխա-
խոտագործի մի քանի ամսվա համառ աշխատանքը:

Սակայն կոլտոզնիկները համառորեն պաշտպանում են
իրենց աշխատանքը դաշտերում, վորովհետև նա յերկրին
տալիս է թանգարժեք կուլտուրա, վորը ծառայում է ար-
տածման համար և այդպիսով ոգնում յերկրի ինդուստրացմանը,

«Կարմիր Հոկտեմբերը» վատ կոլտոզ չէ:

Հաղիվ է լրացել նրա գոյութեան 1 տարին, իսկ կոլ-
տոզն արդեն անկել է 30 հեկտար այդի (մանր կաղին և
սալոր), ընդարձակել է ծխախոտի ցանքերի տարածութեանը,
կառուցված է մի մեծ մաքաղ ծխախոտի համար: Այս-
տեղ պետք է շեշտել, վոր այդ մաքաղը (սարայ) ամբողջ-
վին կառուցված է կոլտոզնիկների ջանքերով:

1807
32595



Հունվարի վերջերին կոլխոզն ամբողջովին հանձնեց
30 թվի ծխախոտի բերքը: Գարնանացանի ընդհանուր նա-
խապատրաստութեան հետ միասին նրանք արդեն անցել են
հասարակական շենքերի կառուցմանը:

Իսկ կառուցման ծրագիրը բավական ընդարձակ է.
պիտի կառուցեն ծխախոտի մի մեծ չորանոց, անասունների
գոմ, պահեստ, սիլոսային/աշտարակ և մի ընդարձակ բնա-
կարան:—

Լինելու յե ընդհանուր չորանոց, ընդհանուր մարագում
ծխախոտը փնջելու յեն, տեսակավորելու և հակեր կապելու:

Աշխատանքի բազմադարյան պայմանները, վորոնք
բթացնում, չորացնում և առաջ եյին բերում թոքախա՝ վե-
րանալու յեն:

Կոլխոզում լինելու յեն աշխատանքի համար հատկա-
պես հարմարեցված առողջապահական շենքեր:

Ցերեխաները և հիվանդները չեն աշխատելու: Աշխա-
տանքը չափավորվելու յե: Ծխախոտի սոցիալական հիվան-
դությունները աշխատանքի ճիշտ կազմակերպման և առող-
ջապահական պայմանների ճշման տակ հետ են նահանջելու:

Այսպես եյին ասում ինձ վարչութեան անդամները և
նույնը յես կրկնում եմ այժմ ծերունի-կոլխոզիկին, վորի
հետ զրուցում եմ:

Նա զլլի շարժումով հավանություն է տալիս, վորի
ընթացքում նրա կեմքի կնճիռները հարթվում են, դարձ-
նելով դեմքը յերիտասարդ և առույգ:

Նա ժպտում է: Մակայն յերբեմն նրա դեմքով սահում
է թեթև, հազիվ նկատելի անվստահություն:

Ի՞նչի հետևանք է այդ:

Ի՞նչու իր սրտի խորքում նա չի հավատում իմ ասա-
ծներին:

Գուցե նա ինձ համարում է հեքիաթներ հնարող, վո-
րոնցով (հեքիաթներով) այնքան հարուստ է հայ ժողովուրդը:

Կամ գուցե նա ինձ համարում է մի յերնակայող, վորն
անցյալի ծանր իրադարձություններից և այսօրվա կենսու-
րախ կառուցումից հաջողութեամբ հյուսում է գալիքի
հեքիաթը:

Ո՞վ իմանա ի՞նչի մասին է նա մտածում:

Չե՞ վոր նա առաջին անգամն է ապրում և աշխատում
կոլխոզում:

Նա իր տարիքին շատ բան է տեսել:

Նա տեսել է բեկերի, տաճկական եֆենդիների և
ռուսական իշխանների ու կալվածատերերի:

Իսկ կոլխոզ, հասարակական չորանոցներ—նա չի
տեսել:

Այս ամենը ծերուկը չի տեսել: Իրա համար է, վոր նա
անվստահորեն ժպտում է այժմ: Այդ է պատճառը, վոր նա
այդպես թերահավատորեն նայում է դեպի ինձ, վախենա-
լով իր կասկածանքով անհանդստացնել իր և իր կոլխոզի
զրավիչ ապագան:

Իր գոյութեան համեմատաբար կարճ ժամանակամիջո-
ցում խոշոր նվաճումներ է ձեռք բերել «Կարմիր Հոկտեմբե-
րը» և դա նկատելի յե արդեն շրջակայքում:

Կոլխոզը մի անգամ արդեն պրեմիա յե ստացել.—300
ռուբլու մանուֆակտուրա, գործուղում դեպի սանատորիա
և եկակուրսիա դեպի Սարկով:

Կոլխոզը կարող է յերկրային ցուցադրական կոլխոզ-
ների շարքում պատվավոր տեղ զբաղել:

Իրավացի չենք լինի, յեթե չմատնանշենք, վոր կոլխո-
զը ունի «արտադրութեան մի ճյուղ» ևս, վորը պակաս կա-
րևոր չէ ծխախոտից և կաղինից:

Թեպետ կոլխոզը հատկապես չի զբաղվում այդ ճյու-
ղով, բայց և այնպես այդ աշխատանքը բավական զգալի յե:
«Կարմիր Հոկտեմբերը» տալիս է կոլեկտիվիստների
կադրեր, ավելի ճիշտ պատրաստում է այդ կադրերն ուրիշ-
ների համար:

Ռայոնում արդեն այսպիսի կարծիք ե տիրում—

— Պետք ե ակտիվիստ—դիմիր «Կարմիր Հոկտեմբերին»:

Ահա ինչու Առաքելյան Վահանն առաջ եր քաշվել վորպես Հոռ դյուզխորհրդի խրճիթվար, իսկ այժմ «Հոկտեմբերի 12-րդ տարեդարձ» կոլխողի նախագահի տեղակալն ե, իսկ Քեհեյան Անդրանիկը, Գրիգորյան Սեդրակը և Դավյաշյան Սուրենը հարևան կոլխողների նախագահներն են:

Տնտեսավարության նոր ձևերը ստեղծում են աշխատանքի նոր պայմաններ:

Նոր պայմաններն առաջ են բերում նաև նոր փոխաբաբերություններ:

Կոլեկտիվացման ժամանակ «միջոցը» դառնում ե իսկական համերաշխության ձև, կոլեկտիվացման ժամանակ Ֆառայությունը և ոգնությունը դիտվում ե միայն կոլեկտիվի շահերի տեսակետից:

Կոլխողի ներսում խորը կերպով ամրացել ե այն կարծիքը, վոր ինքը պետք ե ոգնի հարևան կոլխողներին:

Յեվ իսկապես, «Կարմիր Հոկտեմբերը» յերբեք չի հրաժարվել կոլխողային համերաշխությունից:

Աշխատանքների յեռուն ժամանակ կոլխողը մոտակա կոմունան եր ուղարկել մարդկանց և լծկան՝ հերկին ոգնելու համար:

Իլյիչի անվան կոլխողն են ուղարկել ատաղձագործների, նույնիսկ իրենց մարագի կառուցման աշխատանքները դադարեցնելու դնով:

Վորոշիլովի և Կալինինի անվան կոլխողներն են ուղարկել բրդագոյներ և ձիեր՝ հերկին և ծխախոտի տնկմանն ոգնելու համար:

Իսկ կոլխողի դաշտաբուժական ճյուղի ղեկավարը մի քանի որով գնացել եր Իլյիչի անվան կոլխողը հրահանգներ տալու, թե ինչպես պիտի խնամել ծխախոտը:

Վոչ վոք չի կարող գանգառվել «Կարմիր Հոկտեմբերի» կոլխողներին:

Վոչ վոք չի կարող նրանց նախատել փակվածության մեջ:

Կարմիր հոկտեմբերցիները համերաշխ կերպով ամրապընդում են կոլխողային շարժումն իրենց կոլեկտիվի սահմաններից դուրս և: Կոլխողներն ոգնում են իրենց հարևաններին:

Վրա յե հասնում զիշերը:

Լեռների զառաթներին բարձրանում ե լուսինը և փրոում իր արծաթագույն շողերը շրջակայքի վրա:

Ծովից փչում ե աղի խոնավություն:

Յերկնքի կապտավուն կամարի վրա փայլում են աստղեր: Լուսթյունը ձգվում ե հեռու և հեռու:

Հոգնած կոլխողները ցրվում են:

Նրանք շտապում են հանգստանալու:

«Կարմիր Հոկտեմբերի», ինչպես և հարևան կոլխողների գյուղացիները դաղթել են Տաճկաստանից:

Տաճկաստանում հողերը դանվում եյին եֆենդիների ձեռքին:

Հարկերը ծանր եյին և անչափ. բնակչությունից առնում եյին բերքի և յերկրորդ մասը և տասերորդ մասը և մնացած մասը. խոտեցեք նրանց հեռ և նրանք կպատմեն ձեզ, թե ինչպես են «ապրել» Տաճկաստանում: Մարտափ ե բուրում այդ վոչ խորամանկ պատմություններից:

Հայերը մասսայական կերպով փախչում եյին Տաճկաստանից և հույս ունեյին ապաստան գտնելու Ռուսաստանում, սակայն մի կրակից ընկնում եյին մյուս կրակի մեջ:

Այդ իսկ ժամանակ ցարական կառավարությունը պատժում եր ապստամբ չերքեզներին:

Սրով և կրակով եյին անցնում ցարական զորքերը լեռնային Կովկասով, մաքրելով ամեն ինչ իրենց ճանապարհին, ծածկելով իրենց անցած ուղին հաղթողների և հաղթվողների վոսկորներով:

Առէները դատարկվեցին: Լեռները վայրենացան: Հարուստ այգիները դարձան ամառի անաղատներ:

Իեռ այժմ ել դուք լեռներում կարող եք վայրի պլուզատու շատ ծառերի հանդիպել, վորոնք ժամանակների ընթացքում վայրենացել են:

Իեռ այժմ ել այդ ծառերն առատ պտուղներ են տալիս, բայց այդ պտուղները դառն են, ինչպես չերքեղական վիճակն անցյալում և տղպոտ, ինչպես անցած պայքարը:

Ահա այս վայրերում հենց տեղավորվեցին Տաճկաստանից փախչողների մի մասը:

Իրենց ծոցում բազմահազար ազատասեր չերքեղներ թաղած լեռները դարձան փախստական հայերի համար նոր հայրենիք, նորից դարձան համառ աշխատանքի և գոյության դաժան պայքարի վայրեր:

Հողը սեփականութուն եր հանդիսանում «մեծ» և փոքր իշխանների, վորոնք տիրապետում եյին հարյուր հազարավոր ղեկատիրն բերքատու հողերի, վորոնք նվեր եյին ստացել «համարձակության» և «քաջագործության» համար, տասնյակ և հարյուր հազարավոր դորշ զինվոր—«անասունների» սպանդանոց քշելու, պատժված ժողովրդների անխիղճ խողխողման համար:

Հողը կապալով եր տրվում և այն ել վոչ յերկարատև հապալով տրված հողի վրա արգելվում եր շինքեր կառուցել, այգիներ գցել, պլանավորումներ կատարել:

Յարական կառավարութունը վախենում եր, վոր նորեկները կարող են ամրանալ հողի վրա և այն ժամանակ արգեն հեշտ չի լինի նրանց արմատահան անել:

Գաղթականներն զբաղվեցին ծխախոտագործությամբ, այսինքն նրանով, ինչով վոր զբաղվում եյին Տաճկաստանում:

Կապալավարձը բարձր եր և լրացվում եր վոչ սրակաս բարձր հարկերով:

Այս բոլորի վրա ավելանում եր ծխախոտագործական արդյունաբերության նյութական հարստահարումը:

Յերբ բերքը հավաքված եր և ծխախոտը չորանում եր դեռ, սովորաբար գալիս եր վորեւ մի գործարանատեր և սկըսում եր գնել ծխախոտը:

Վորքան կամենար, այնքան ել կվճարեր:

— Ձեռնտու չե—մի ծախիր:

Վոչ մի սահմանված գին, վոչ մի կանոն:

— Քեզ կվճարեմ այսինչ գնով, իսկ հարևանիդ—այսինչ:

— Բայց ինչո՞ւ:

— Հարևանիդ ծխախոտը լավն ե:

Յեկ միտասեակ ծխախոտի համար վճարում եյին տարբեր գին և հաճախ այնքան ցածր, վոր արժեքագուրկ—եյին անում ամբողջ բերքը:

Ծխախոտ գնողներն ունեյին իրենց «սիրեցյալները». այդ նրանք եյին, վորոնք իրենց ձեռքումն եյին պահում գյուղը, վորոնք ոգնում եյին քամելու չքավորներին, վորոնք ձառայում եյին վորպես դադանի միջնորդներ գործարանի և ծխախոտագործի միջև:

Ձեզ զարմացնում ե, թե ինչո՞ւ եյին վատ ապրում ծխախոտագործներն այդ բարեհամբույր յերկրամասում:

Ձեզ զարմացնում ե, թե ինչո՞ւ նման թանգարժեք կուլտուրայի դեպքում ինչպիսին ե ծխախոտը—հայ աշխատավորներն ապրում եյին սարսափելի աղքատության մեջ:

Իմեցեք նախկին ծխախոտային գործարանատերեր՝ Մեսաքսուզու, Ստամբուլի, Ջիդիտի նախկին յեկամուտներին և դուք կհասկանաք, թե ինչպես և վորտեղ եյին թափվում ծխախոտագործների յեկամուտները և դուք կհասկանաք, թե ինչպես բնությունը, վորը տալիս ե հարուստ պարզներ,

միևնույն ժամանակ տալիս եր այն վոչ աշխատավոր հողագործին:

Հայ աշխատավորները միամտաբար հավատալով, վոր քրիստոնիաներն ավելի բարեսիրտ են քան մուսուլմանները, Ռուսաստանում ստացան միայն մի անբաժանելի իրավունք — անսահման աշխատել, կարիքից անբաժան լինել և շարունակ վրդովվել ցարական կարգերից:

Սոսեցեք վորևե ծերունու հետ: Խնդրեցեք, վոր պատմի ձեզ վորևե միջադեպ իր անցյալից:

Յեվ լսեցեք ուշադիր: Լսեցեք յերկմր, յերկմր: Դուք շատ բան կիմանաք: Շատ բաներից դուք կսարսափեք:

Բայց յերբ նա պատմելով կհասնի մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, կամ յերբ դուք, ընդհատելով նրան, հարց տաք — «Իսկ ի՞նչ է արել ձեզ համար խորհրդային իշխանությունը», նա մի բոպե կանդ կառնի:

Նա խորը շունչ կքաշի, կարծեք աշխատելով ավելի շատ ոգ ծծել և դեմքը կծածկվի կարմիր աշխույժով:

— Ո՛ր, խորհրդային իշխանությունը մեզ շատ բան է տվել — կասի նա ձեզ, մի անգամից խոսք չդառնելով մանրամասն պատմելու այդ մեծ դործի մասին:

Իսկ հետո, կարծեք թե աշխատելով ազատվել մտքերի և խոսքերի հորձանքից, նա ձեզ կպատմի, թե ինչպես ձրիարար հողը հանձնվեց իրենց:

Շատ եր հողը: Անսահման քանակությամբ: Ընտրելով վորը կուզես և վորտեղ կուզես: Միայն կարողացիր մշակել նրան:

Ամեն ինչ պատկանում է քեզ: Չկան իշխանները: Չկան կառավարիչներ, վոր մտրակեն մարդկանց ինչպես շների: Չկան վայրի և արյունուշտ արեզոյիկներ:

Մինչդեռ կա գյուղխորհուրդ, վորտեղ աշխատում են հարազատ մարդիկ, չքավորներ. նախագահն էլ հարազատ է, հայ չքավորներից:

— Ո՛ր, խորհրդային իշխանությունը մեզ շատ բան տվեց:

Ի՞նչ է նշանակում «շատ» — ասեն ինչ: Ամեն ինչ տվեց: Յեվ ազատ աշխատելու իրավունք և ազատ ապրելու իրավունք:

— Դուք տեսնո՞ւմ եք այս տները — ձեռքով ցույց կտա նա ձեզ լավ տները — սրանք կառուցված են խոր, իշխանության որոք, իսկ նրանք ահա — և ցույց կտա նա ձեզ շան բների նմանվող տնակների վրա — նրանց մեջ մենք ապրում եյինք ցարիզմի ժամանակ:

— Ձե՛ վոր մեզ չեք կարելի լավ տներ կառուցել, մեզ չեք կարելի այգիներ տնկել, հողը պատկանում էր իշխաններին — կբացատրի նա ձեզ, վախենալով, վոր դուք դուք գուցե այնքան ել ճիշտ չհասկացաք նրան և ներկան խառնում եք անցյալի հետ:

Դուք մի հայացքով նայում եք ձեր շուրջը: Յեվ տեսնում եք շատ նոր տներ, ծխախոտի կանաչ դաշտեր, կադնու խիտ թփուտներ, խազողի կախված վողկույզներ և ծանրությունից խոնարհված պտղատու ծառեր:

Դուք յերկար նայում եք նրանց և այն ժամանակ սկսում եք հասկանալ, թե ինչու այդքան ուրախությամբ և շնորհակալությամբ խոսում են այստեղ խորհրդային իշխանության մասին, թե ինչու նոր հասարակակարգի մեջ այստեղ տեսնում են վոչ միայն իրենց ազատությունը, այլ և ամբողջ մի ժողովրդի բաղձանքները իրագործումը:

* * *

Ձեզ հետաքրքրում է, թե ինչպես է կազմակերպված աշխատանքը կոլխոզում, ինչպիսի յեկամուտներ ունի նա, աշխատանքի ինչպիսի ձևեր են գործադրվում այստեղ:

Համեցեք: Ձեզ այդ մասին ես սիրով կպատմեմ: Ձեզ ցույց կտան և հաշիվներ և գրքեր և սոցմրցման պայմանա-

գրեր: Նայեցեք: Կարդացեք: Ուսումնասիրեցեք: Այսանդ ամեն ինչ պարզ ե ինչպես ասի մեջ:

Այժմ յերեկո յե, իսկ վաղը առավոտյան բոլորը դուրս կդան աշխատանքի:

Սակայն մարդիկ դես ու դեն չեն ընկնելու, այլ ամեն վաղ կերթա իր տեղը և կսկսեն աշխատել իրենց ողակապետի ղեկավարութեան տակ:

Ամբողջ կոլխոզը բաժանված ե հինգ խմբերի (գրուպա). ասեն մի խումբ ունի իր խմբավարը, վորն ընտրվում ե խմբի ընդհանուր ժողովում և հաստատվում կոլխոզի վարչութեան կողմից:

Ընտրովի խմբավարների այս սկզբունքն այստեղ պահվում ե հաստատ և մինչև այժմ չի խախտվել:

Այսպիսի կարգը պետք ե վողջունել: Դա աշխատանքի սոցիալիստական կազմակերպման ձևերից մեկն ե, վորը հետադաշում իր տեղն ե գրավելու սոցիալիստական տնտեսութեան բոլոր ճյուղերում:

Ընտրում են խմբավար—աշխատանքի հրամանատար և յենթարկվում են նրան. իսկ յեթե նա չի կարողանում իր պարտականութեանները կատարել, նրա փոխարեն ընտրում են մեկ ուրիշին:

Բայց դուրս աշխատանքի ժամանակ գոյութիւն ունի «քվեարկութեան» և «վերընտրութեան»:

Վոչ: Կամավոր դեմոկրատական քվեարկութիւն՝ ընտրութեանների ժամանակ և պարտադիր, հաստատուն դիսցիպլինա՝ աշխատանքի ժամանակ—սա յե այն սկզբունքը, վորը յուրացրել են կոլխոզիկները և վորը մինչև այժմ չի խախտվել:

Սմբավարին տրված են յերեք ողնականներ, վորոնք հետևում են՝ մեկը—լծկան անասունին, մյուսը—ինվենտարին և յերրորդը—սերմացույին:

Աշխատանքի ժամանակ գոյութիւն ունեն ողակապետ-

ներ կամ բրիգադիւրներ, վորոնց անմիջական ղեկավարութեան տակ կատարվում են բոլոր տեսակի աշխատանքները տեղում:

«Կարմիր Հովտեմբերի» պայմաններում խմբերի բաժանելը բավական անհրաժեշտ և կենսունակ միջոցառում ե հանդիսանում:

Բանը նրանումն ե, վոր Վերին Լոոն, ինչպես և ամեն մի գյուղ այս կողմերում, ցրված ե բլուրների վրա: Մեկ յերկու տուն ընկած են այս բլուրի վրա, մի քանի տուն մյուսի և այլն:

Իրար հետ հարաբերութիւն պահելը հեշտ չե: Արտերը ևս խմբված չեն: Սա ուսսական կամ ուկրաինական գյուղը չե փողոցներով, թաղերով և ընդարձակ արտերով:

Մի խումբ տներ, վորոնք ընկած են համեմատաբար վոչ այնքան մեծ տարածութեան վրա և կազմակերպչական տեսակետից կազմում են կոլխոզի «գրուպան», ցեխի նման ինչ վոր մի բան, թեպետ առանց ինքնուրույն տնտեսական ֆունկցիաների և վարչութեան:

Աշխատանքների բաժանման գործը տանում ե վարչութեան անդամ դաշտաբուժական մասի վարիչը: Նա բաժանում ե աշխատանքի նարյաղները, շրջում աշխատանքի վայրերը, տալիս ե ցուցմունքներ և հրահանգներ:

Չնայած այս առատ «պաշտոնյաներին», բայց և այնպես կոլխոզն ունի միայն մեկ ազատ աշխատող—վարչութեան նախագահը (հաշվապահութիւնը կատարում ե դրսից հրավիրված հաշվապահը): Մյուս բոլոր ղեկավարներն աշխատում են ըստ համատեղութեան, իրենց հիմնական պարտականութեանների հետ:

Արտաժամյա աշխատանքի համար նրանց հաշվում են միայն մի քանի ժամ և վոչ ավելի:

Աշխատանքներին մասնակցում ե կոլխոզի համարյա ամբողջ բնակչութիւնը:

Այնուամենայնիվ պետք է մատնանշել, վոր աշխատանքին ներկա լինելն անբավարար է:

Պատկերավորելու համար բերենք հետևյալ թվերը:

Շնչերի ընդհանուր թիվը կոլխոզում կազմում է 362 հոգի, վորոնցից՝ 1-ից մինչև 10 տարեկան—115 շունչ, 10-ից 14 տարեկան—49 շունչ, 14-ից 16 տարեկան—20, 16-ից 18 տարեկան—19, 18-ից մինչև 65 տարեկան—156 և 65-ից վեր—3 շունչ:

Այսպիսով աշխատունակ կոլխոզնիկների հիմնական խումբը կազմում է 185 հոգի:

Այս քանակութունը բավական կլինի կոլխոզի պլաններն իրագործելու համար, բայց այդ լամբից դուրս են մընում մինչ 50 հոգի կանայք, վորոնք համարյա բոլորովին չեն աշխատում կոլխոզում և զբաղվում են տնային տնտեսությամբ, այն ժամանակ, յերբ թեթև աշխատանքներում (կաղինի հավաքում, ծխախոտի տունկի ծաղիկների պոկում) բավականաչափ գործազրվում է նաև անչափահասների աշխատանքը:

Յեվ ահա յեթե վերցնենք, թե ինչպես եյին դուրս գալիս աշխատանքի անցյալ տարի հունիսին և հուլիսին, այսինքն ավելի լարված աշխատանքների ամիսներին, ապա կատանանք հետևյալ պատկերը:

Հունիսին աշխատանքի յեն դուրս յեկել 229 հոգի, վորոնք բոլորը միասին աշխատել են 3580 աշխատանքային ուր (այսինքն միջին հաշվով 16 աշխատանքային ուր ամեն մեկին):

Հուլիսին աշխատանքի եյին դուրս յեկել 197 հոգի, բոլորը միասին աշխատել են 2970 աշխատանքային ուր, այսինքն ամենք մեկը միջին թվով աշխատել է 15 աշխատանքային ուր:

Պետք է նկատել, վոր այս թվերն այնքան ել հիշտ չեն, վորովհետև աշխատանքի դուրս յեկածների թվում մթո-

ցված են նաև մանուկները և անչափահասները, վորոնք աշխատել են վոչ ամբողջ ուրը, այլ մի քանի ժամ միայն:

Սակայն յեթե վերցնենք նույնիսկ այս հանդամանքը, համենայն դեպս ամեն մի աշխատունակի բեռնվածությունը ամսական 16-18 ուրից չի անցնի:

Կոլխոզում տեղի յեն ունեցել աշխատանքային դիպցիպլինայի խախտման դեպքեր:

Այդ բանի դեմ կովելու համար անց է կացվում հետևյալը. գործալքողներին նկատողություն է արվում, իսկ կրկնվելու դեպքում նրանք տուգանվում են իրենց մի ուրյա աշխատավարձի չափ:

Դեպքեր են յեղել, յերբ յերկու կոմյերիտականներ թողել են աշխատանքները և գնացել են գրոսնելու:

Նրանց տուգանել են: Նրանց վարմունքը քննվել է կոլխոզային ակտիվի ժողովին: Մեղավորները «զղջացել են»:

Վերջին ժամանակներս նրանք աշխատանքներից չեն բաժանվում:

Յերիտասարդ են կոլխոզնիկները: Չունեն դեռ հարկ յեղած փորձառություն: Դեռ բոլորը չեն յուրացրել վոր կոլխոզային դաշտը հանդիսանում է կոլխոզային Ֆրոնտի մի մասը, վորտեղ, ինչպես ամեն մի այլ Ֆրոնտում, հարկավոր է ուշիմություն, սովորություն և հաստատակամություն:

Չեր կարող իհարկե այս յերևույթները չնկատել կոլխոզի վարչությունը, վորը ժամանակին կարողանում է նկատել նման յերևույթները, հանել հիմնական յեզրակացություններ և կոլխոզային մասսայի լայն կարծիք կաղմակերպել աշխդիպցիպլինայի և արտադրողականության բարձրացման շուրջը: Յեվ կոլխոզի վարչությունը ժամանակին մատնանշել է.

— Աշխատանքի դիպցիպլինան բացակայում է.

— Աշխատանքների ժամանակ խոտակցություններ են տեղի ունենում.

— Նկատվում ե անուշադիր վերաբերմունք դեպի կատարվող աշխատանքը:

Պարզ ե, վոր այսպիսի դրուժյունը չի կարող չազդել կոլխոզի ընդհանուր դրուժյան վրա:

Անցյալ տարվա դարնանացանի կամպանիայի ժամանակ նկատվեց կոլխոզի արտադրական պլանի կատարման մեջ ձեղքվածք:

Մխախտտի տնկումն սկսեց ձգձգվել:

Յեվ ահա ամբողջ կոլխոզում սկսեց հնչել—

— Ճեղքվածք... ձեղքվածք...

Բոլորն իրար անցան: Հանաք բան ե—տնկումն ուշացավ. Իսկ չե՞ վոր «Կարմիր Հոկտեմբերը» սոցիալիստական մրցման պայմանագիր ե կնքել հարևան կոլխոզների հետ:

Չի կարելի թույլ տալ պլանի վիժում:

Վարչությունն անմիջապես մոբիլիզացիայի յի յենթարկում հասարակական կարծիքը:

Կոմյերիտականները հարցը քննում են իրենց բջիջում: Պատի լրագիրը սկսում ե ահազանգել:

Յեվ կոլխոզնիկները վորոշում են—

— Ավարտել ծխախոտի տնկումը մինչև մայիսի 15-ը:

— Աշխատանքները տանել հարվածային կարգով:

Իսկ չե՞ վոր պլանից բացի հարկավոր ե 8 հեկտար ավելի տնկել:

Աշխատանքը սկսում ե յեռալ:

Դաշտ դուրս յեկան բոլոր աշխատունակները: Վոչ մի դասալիք, վոչ մի սիմուլյանտ:

Յեվ արդյունքն այն յեղավ, վոր աշխատանքներն ավարտվեցին ամբողջովին և ժամկետից 3 օր առաջ:

Աշխատանքի ճիշտ կոնկրետացումը բավական նպաստում ե աշխատանքների սահուն սահմանավորման և աշխատանքի նորմաների սահմանմանը:

Մշակված և ընդհանուր ժողովի կողմից հաստատված

են աշխատանքի նորմաներ, վորոնք հայտնի յեն ամեն մի կոլխոզնիկի:

Ամեն ինչ նախատեսված ե նորմայով, ամեն ինչ ճշտորեն հաշված ե և նշանակված:

Սակայն, կարող են թյուրիմացություններ լինել, սխալ հաշվառում, աշխատանքի իզուր վատնում, վերջապես, կարող ե տեղի ունենալ անբարեխղճություն աշխատանքների կատարման ժամանակ:

Ամեն ինչ կարող ե լինել:

Իսկ թյուրիմացությունները պետք ե լիկվիդացիայի յենթարկել և վորքան կարելի յե շուտ, որեկտիվորեն: Նման դեպքերում չի կարելի ձգձգել վեճը, հակառակ դեպքում կարող են բամբասանքներ առաջ գալ:

Յեվ յեւքը գտնված ե.

Կոլխոզի վարչության կից կազմված ե հատուկ «ստուգելի բրիգադա» 3 հոգուց բաղկացած:

Հարկ յեղած դեպքերում բրիգադը գնում ե աշխատանքի վայրը, հետազոտում, ստուգում և հարթում կոնֆլիկտը: Մի անգամ բրիգադան հայտնաբերել եր աշխատանքի սխալ հաշվառում և աշխատանքի ցածր վորակ:

Առաջարկվեց վերանայել վարձատրությունը:

Վարչությունը կատարեց այդ:

Յեվ վոչ մի անախորժություն, վոչ մի վիրավորանք: Բրիգադան վորոշել ե—ուրեմն ճիշտ ե:

Բրիգադին պետք ե հավատար:

Կոլխոզը մրցում ե: Յեվ վոչ միայն իրեն ներսում, այլ և հարևան կոլխոզների հետ: Սոցիալիստական մրցման մասսայական շարժումն ընդգրկեց նաև «Կարմիր Հոկտեմբերին»:

Վոչ այնքան հեռու գտնվում ե Աթարբեկյանի անվան կոլխոզը:

Տնտեսության ձեռ միկնույնն ե. իր ծավալով և այնքան փոքր չե: Յեվ ահա, լեզու գտան:

Խոսակցութեանները յերկար չտեկցին: Պայմանները ընդունելի չեն. թե մեկը և թե մյուսն աշխատում են նպաստել յերկրի կոլեկտիվացմանը, թե մեկը և թե մյուսը կառուցում են սոցիալիստական դյուղատնտեսութուն: Ել ի՞նչ «աճուրդ» կարող ե լինել այստեղ:

Քաղաքական խնդիրները հասկանալի չեն:

«16-րդ կուսկոնֆերենցիայի դիմումի և կուսակցութեան վորոշման հիման վրա, մենք, «Կարմիր Հոկտեմբեր» կոլխոզի և Աթարբեկյանի անվան կոլխոզի անդամներս հանձինս մեր լիազոր ներկայացուցիչներին, կնքեցինք ներքոհիշյալ քարաքական—տնտեսական պայմանագիրը:

Ամեն կերպ աշխատելով իրագործել կուսակցութեան և պետութեան միջոցառումները, վորոնք ուղղված են դեպի արդյունաբերութեան և դյուղատնտեսութեան զարգացումը և բարձրացումը, դիմելով սոցիալիստական մրցման, մեր վրա յինք վերցնում հետևյալ պարտավորութունները...»:

Յեվ այնուհետև գալիս են դործնական կետերը՝ ընդարձակել ցանքերի տարածութունը, համայնացնել սերմացուն, բարձրացնել աշխատանքային դիսցիպլինան:

Չեն մոռացված նաև փոխադարձ ստուգման, լայն հասարակական կարծիքի առաջ հաշիվ տալու կետերը:

Պայմանագիրը վերջանում է Համկոմկուսի (բ) Հ-կովկասի Յերկրային Կոմիտեյի և Յերկրային Գործադիր Կոմիտեյի դիմումից բերված հետևյալ խոսքերով, վորոնք հաստատուն և վճռական կերպով պնդում են, վոր՝

«Մենք այս խնդիրները կիրագործենք, վորովհետև ընթանում ենք կոմկուսի լենինյան քաղաքականութեամբ ստուգված ճանապարհով. վորովհետև դյուղացիութեան հիմնական մասաներն իրենք դործնականորեն վճռում են սոցիալիստական շինարարութեան հարցերը դյուղում»:

Ստորագրութեաններ և ուրիշ վոչինչ:

Վոչ մի կնիք: Պայմանագիրն ամրագրողը են սեղմելով իրար ձեռք, հաստատել են՝ կոլխոզային մասնաների միաձուլութեամբ:

Հարեան դյուղում գտնվում է «Նոր Լույս» հայկական կոլխոզը:

Նրանք ևս ուղարկել եյին իրենց ներկայացուցիչներին «Կարմիր Հոկտեմբեր» սոցմրցման պայմանագիր կնքելու:

— Ի՞նչ կա վոր, կկնքենք և նրանց հետ. յետ չենք մնա: Յեթե աշխատում ենք սոցիալիզմի համար, ապա աշխատենք սոցիալիստորեն:

Յեվ նորից պայմանագիր: Յեվ նորից սոցմրցման մասին:

«Նոր Լույսի» հետ կնքած պայմանագիրն ավելի փոքր է իր ծավալով և առանց նախաբանի:

— Իրագործել 100 տոկոսով ստուգիչ թվերը:
— Կազմակերպել ծխախոտագործական ցուցադրական դաշտ, գործադրելով հանքային պարարտանյութեր:

— Նյութական ողնութուն ցույց տալ կոլխոզի չքավորներին և բատրակներին:

Իսկ վորպեսզի հսկողութուն լինի, վորպեսզի յետ մնացողներն առաջ անցնեն—

— Ամսական յերկու անգամ իրար տեղեկութուններ տալ սոցմրցման պայմանագրերի իրագործման մասին:

— Այցելել իրար, փոխադարձ հետազոտութուն կատարել:

— Իսկ ո՞վ առաջինը յեզավ—հարցնում եմ յես ժպտացող կոլխոզիկներին:

— Իհարկե մենք—հեղինակավոր կերպով պատասխանում են նրանք—մենք վոչ միայն իրագործեցինք պայմանագիրը, այլ և մի շարք կետերում դերակատարեցինք:

Իուք փաստեր ե՞ք պահանջում:
Համեցեք—

— 1930 թ. ծխախոտի ցանքի պլանը գերակատարված է 8 հեկտարով:

— Յեղիպտացորենինը՝ 5 հեկտարով:

— Այգիների տնկումը՝ 4 հեկտարով:

— Իսկ ցորեն, վորը բոլորովին ել նախատեսնված չի յեղել պլանով, ցանել են վոչ ավելի վոչ պակաս 20 հեկտար:

Այդպես ե յեղել միշտ: Այդպես ե յեղել բերքահավաքման ժամանակ. այդպես յե յեղել ծխախոտի չորացման և փնջման ժամանակ. այդպես ե և այժմ, յերբ «Կարմիր Հոկտեմբերն» ավելի մեծ ենուղղիազմով պատրաստվում ե բոլշևիկյան յերկրորդ գարնանացանին:

Ահա ձեզ «Կարմիր Հոկտեմբերը»:

Դե փորձեցեք մրցել նրա հետ:

Սոցմրցման հետ միասին, անցյալ տարվա բերքահավաքման կամպանիայից սկսած կոլխոզում ծայր ե առել հարվածայնությունը:

Կոլխոզնիկների ճնշող մեծամասնությունը հարվածայիններ են, հարվածայիններ վոչ խոսքով, այլ գործով:

Շատ են նրանք. և տղամարդիկ և կանայք և յերիտասարդներ և հասակավորներ: Հարվածային չեն նրանք, այլ ենուղղիաստներ:

Քանի՛ քանի անգամ նրանք մինչև կես գիշեր լուսնյակի լույսի տակ մեկիկ-մեկիկ ծխախոտի տերևներ են քաղել, վոր ժամանակին սառնամանիքից ազատեն իրենց աշխատանքի պտուղը:

Քանի՛ քանի անգամ նրանք մինչև կես գիշեր ճրագի լույսի տակ մեկիկ-մեկիկ ծխախոտի տերևներ շարել են թելերի վրա:

Քանի՛ քանի անգամ նրանք մինչև կես գիշեր ճրագի լուսի տակ մեկիկ-մեկիկ իրար վրա յեն դասավորել ծխախոտի չորացած տերևներ, փնջեր կապել, հակեր կազմել:

Յեվ միշտ ուրախ, միշտ վիզկտորությամբ, առանց տըրտունջի, առանց վհատման:

Միշտ, յերբ արտադրական պլանի կատարումը դժվա-

րությունների յե հանդիպել, նրանք հավաքել են իրենց ամբողջ ուժերը, հարթել այդ նեղ տեղերն ու հաղթականորեն առաջ անցել:

Յեվ միշտ, նրանցից ամեն մեկը յերբ ծխախոտի տերևը շրջել ե մատների մեջ, կրծքի տակ ուռճացել ե սիրտը, ամբողջ եյությամբ զգացել կոլեկտիվ աշխատանքի քաղցրությունը և խորապես համոզված ե յեղել սոցիալիստական տնտեսության վերջնական հաղթանակի մեջ:

Այդպես ե «Կարմիր Հոկտեմբերում», այդպես ե մեր յերկրի ամեն մի վայրում, ուր բարախում ե աշխատանքի տեմպը:

* * *

Մեզ հետաքրքրում ե կոլխոզի անդամների յեկամուտը:

Ի՞նչքան են նրանք աշխատում: Ի՞նչպես են ստանում իրենց վարձատրությունը:

Ի՞նչ տեսակի յեկամուտներ ունեն:

Մենք զիտենք, վոր կոլխոզնիկների և ընդհանրապես ամբողջ կոլխոզի յեկամտի հարցը չափազանց մեծ նշանակություն ունի:

Կոլխոզի յեկամուտներով ե կոլխոզնիկը դատում՝ շահավատ ե, թե վոչ կոլեկտիվ տնտեսությունն իր համար:

Յեվ յեթե անհատական տնտեսությունը, հավասար աշխատանքի գործադրման դեպքում, նրա համար ավելի շահավետ լիներ քան կոլեկտիվը, ապա հազիվ թե նա ուշադրությամբ լսեր բանաձևեր և վորոշումներ կոլեկտիվացման մասին: Յեվ հազիվ թե նրա հարևան անհատականներն այնքան սիրով կոլխոզ մտնեյին:

Ի հարկե, կոլխոզնիկները կարողանում են տարբերել «այսորվա» շահավետությունը «վաղվանից», բայց և այնպես, տնտեսության շահավետությունը կոլխոզում հիմնական տեղ ե բռնում թե կոլխոզի համար տարվող մեր աշխատանք-

ներում և թե կոլխոզի դեմ մղվող կուլակային ազիտացիայի մեջ:

«Կարմիր Հոկտեմբերի» թվերը մի անգամ ևս սուում են, վոր մեր քաղաքականութիւնը ճիշտ և կոլեկտիվացման ընադավառում և վոր փաստերը հաստատում են մեր յենթադրութիւնների ճշտութիւնը:

Մեր սասաններն ավելի ստույգ գործնելու համար, ստորև բերում ենք կոլխոզի 1930 թվի հաշվեկշիւը:

Հետաքրքիր և ուշադրութիւն դարձնել մի քանի ընտրող թվերի վրա. ի՞նչ և ունեցել կոլխոզը 1930 թ. հունվարի 1-ին և ինչով և դիմավորում նա 1931 թ.: 1930 թ. հունվարի 1-ին կոլխոզի ամբողջ յեղած-չեղածը հավասար էր 21589 ու. Ամբողջ 30 թ. ընթացքում կոլխոզի շրջանառութիւնը հավասարվել է 339525 ուրբու և 1931 թ. նա դիմավորում է 73156 ու. սարգոյով:

Կոլխոզի արտադրական-ֆինանսական պլանով նախատեսված էր, վոր բաշխման յենթակա յեկամուտները 1930 թվին պակաս չեն լինի այն չափերից, վորն ընդունված էր և վորոնցով կոլխոզը վճարում էր իր անդամներին: Այդ չափերը հետևյալներն էին. հասակավոր աշխատողն որական ստանում էր 1 ու. 80 կոպ., անչափահասը (14-ից 16 տարեկան) որական ստանում էր 1. 40 կոպ. իսկ փոքրահասակը (մինչև 14 տարեկան) որական 1 ուրբու:

Այստեղ պետք է նկատի ունենայ, վոր կոլխոզի արտադրական պլանի գերակատարումն անպայման ազդել է աշխատավարձի բարձրացման վրա:

Յենելով աշխատանքային որերի քանակից և աշխատանքի նորմաներից, մենք կստանանք հետևյալ պատկերը.

Հինգ հոգուց բաղկացած մի ընտանիք ունենալով 1 աշխատող ձեռք, անցյալ տարվա ապրիլին աշխատել է 29 ուրբու, մայիսին 34, իսկ հունիսին—37 ուրբու: 10 հոգուց

բաղկացած ընտանիքն ունենալով 3 աշխատող ձեռք, ապրիլին աշխատել է 77 ու., մայիսին—140, հունիսին 150 ուրբու: 12 հոգուց բաղկացած ընտանիքն ունենալով 6 աշխատող ձեռք, ապրիլին աշխատել է 170 ու., մայիսին—227, հունիսին—300 ուրբու:

Շահավետութիւնն ակնհայտ է:

Սա համայնացված տնտեսութիւնից ստացված յեկամուտն է միայն:

Վոչ կովը, վոչ հավերը և վոչ էլ խոզը չեն մտնում այս հաշի մեջ:

Իսկ չէ՞ վոր տնտեսութիւնն վոչ համայնացված մասը ևս բաշխանին զգալի յի ընտանիքի բյուջեյում:

Յեվ վոչ մի դեպքում չի կարելի հաշիի չառնել այդ:

Մենք հարցնում ենք առանձին կոլխոզնիկների, մենք նրանց հետ առանձին հաշիվներ ենք անում, մենք աշխատում ենք դիտմամբ կոլխոզի տված յեկամուտի պակաս թվեր վերցնել, իսկ անհատական տնտեսութիւնն—ավելի: Բայց այդ դեպքում ևս նրանք բոլորը, միաձայն հայտարարում են—

—Վոչ, կոլխոզն ավելի շահավետ է:

—Մենք ավելի հեշտ ենք աշխատում և ավելի շատ ենք ստանում:

—Մենք ավելի քիչ ենք. ո՞րսկ անում և ավելի շատ ենք հավատացած վաղվա որվան:

Վորքան էլ ձշան, կաշիներից դուրս գան մեր դասակարգային և կոլեկտիվացման թշնամիները, բայց այս փաստերից նրանք չեն կարող հեռու դնար:

Կոլխոզում ավելի շահավետ է, քան անհատական տնտեսութիւնն մեջ:

Կոլխոզում ավելի մեծ հեռանկարներ կան իր գոյութիւնը ազատ և ապահով պահպանելու համար:

Թող վոր այսոր դեռ առանձին վայրերում անհար-

թուօթյուններ, անկարգություններ լինեն, թող առանձին կոլխոզներում և բերքատվությունը ցածր լինի և յեկամու-
տք վոչ ախնքան կարեոր:

Իս միայն բացառություն է:

Իրանք վատ աշխատանքի վատ արդյունքներ են
միայն:

Իսկ վորպես կանոն—

—Կոլխոզում ձեռնառ լին:

—Կոլխոզում լավ են:



Յեթե «Կարմիր Հոկտեմբեր» կոլխոզը կարող է պար-
ծենալ իր կուլտուրական աշխատանքով, ապա այդ չի կա-
րելի ասել նրա կենցաղի մասին:

Իրեւելով կոլխոզնիկների կենցաղը, զարմանում են, թի
ինչպես կարող են իրար կողքի այդպես հաշտ ապրել և
իրենց գոյությունը պահպանել բարձր գիտակցությունը և
կենցաղային յետամնացությունը: Աշխատանքի նոր ձևեր և
էյանքի հին, նախնական պայմաններ:

Ի՞նչպես կարող են իրար ձուլվել Տաճկաստանից բեր-
ված ասիականության մնացորդները, կուլտուրայի և հասա-
րակայնության սոցիալիստական նոր ձևերի հետ:

«Կարմիր Հոկտեմբեր» ստանում է ավելի կան 200 ո-
րինակ զանազան լրագրեր և հանգեաներ, վորոնցից միայն
54 որինակ «Մուրճ-Մանգաղ»: Ամեն մի ընտանիքի միջին
թվով 3—4 որինակ թերթ և հանգես է գալիս: Հրատարակ-
վում են յերկու պատի լրագրեր, կա դպրոց, գրադարան,
գիտներական վաշտ, կոմյերիտական բջիջ, չքավորական
խմբակ: Հասարակական կազմակերպություններից ունեն-
«Կորչի անդրագիտության ընկերություն», Մուլրի, Պաշը-
ավիլաքիմի և անաստվածների բջիջներ: Ունեն դյուլթիթա-
կիցների խմբակ, վորն իսկապես մեծ դեր է խաղացել գյու-
ղի կուլտուրական-հասարակական զարգացման գործում: Սո-

չու ուսյոնում առաջին դյուլթիթակիցները Վերին Լոոյից-
են դուրս յեկել 1927—29 թ. Վերին Լոոյում կային 60—
65 թղթակիցներ, թղթակցում էին գլխավորապես «Մուրճ-
Մանգաղին»: Թղթակցում էին և հասակավորները և յերի-
տասարդները: Գյուղին վերաբերվող և վոչ մի հասարակա-
կան խնդիր չի վրիպել դյուլթիթակիցների աչքից: Նրանք
վոչ միայն հրապարակորեն, մամուլի միջոցով արծարծե-
լեն այս կամ այն խնդիրը, այլ և ամենայն ակտիվությամբ
նպաստել են այդ խնդիրների կենսագործմանը:

Արտադրական խորհրդակցությունները, կոմյերիտմիու-
թյան և հասարակական այլ ժողովներն անցում են չտե-
նըված ակտիվությամբ և շատ հաճախ տևում են մինչև ար-
լորականչ:

Իրամատիկական խմբակը հաճախ կազմակերպում է
ներկայացումներ:

- Բայց և միևնույն ժամանակ՝
- Ձկա մանկական հրապարակ,
- Ձկա մանկական մտեր,
- Ձկա ընդհանուր փուտ,
- Ձկա բաղնիք,

Իսկ բնակարաններն իրենց ներքին արքուսարքով
լավագույն դեպքում վոչնչով չեն րտարբերվում քոչվոր գնչու-
ների բնակարաններից:

Տնտից լեվ վոչ մեկում չկա վառարան կամ պլիսա:

Խոհանոցը—դա մի մութ սենյակ է, վորի հատակին
շարունակ վառվում է խարույկը:

Այդ յուրահատուկ «պլիտայից» մուխը խիտ կերպով
բնում է ամբողջ խոհանոցը՝ դժվարությամբ մտնելով այն
անցքը, վորը կոչվում է «ծխնիլույզ»:

Կերակուրը պատրաստվում է այդ խարույկի վրա շք-
թաներից կախված կաթսաների մեջ:

Շղթայի յերկարությունը վորոշում է յեփեղու ուժե-
րացման կամ թուլացման անհրաժեշտությունը:

Տանտիկինը կերակուրը պատրաստում է հատակին
չամ փոքրիկ նստարանի վրա նստած: Ծխից բորբոքվում է
արտասվում են աչքերը:

Յեւ այստեղ են բոլոր յերեխաները, այստեղ է գրո-
ււմում տնային ամբողջ անտեսությունը:

Մահճակալներ համարյա չկան: Նրանց փոխարինում
են թախտերը, վորոնց վրա քնում են յերբեմն ընտանիքի
բոլոր անդամները:

Սեղաններ և աթոռներ նույնպես քիչ են:

Իռք կասեք, վոր դա հեռուանք է նրա անտեսության
քածը մակարդակին, վոր դա անցյալի ճնշման և խավարի
խառնուրդն է:

Ճիշտ է:

Բայց ինչով բացատրել, վոր դրա հետ միասին բնա-
կարանների պատերը զարգարված են ղեկավարների և գրող-
ների նկարներով և վոր վոչ մի տնում համարյա չկան կրո-
նական գարգարանքներ:

Այստեղ լրջորեն դեռ չի դրվել նոր կենցաղի հարցը:
Ավիևի չեն առել դեռ հին, գոսացած կենցաղը:

«Պատրաստվեցին» ստեղծել մանկական հրապարակ,
բայց «ցանկացողներ չգանվեցին»:

Ուղեցին ստեղծել մանկական մուրը, բայց «հեռա-
վորության պատճառով մանուկներին բերել-տանելը դժ-
վար է»: Իսկ այս նպատակի համար 600 ուրլի փող կա:
«Թոսեցին» հասարակական փուռ կառուցելու մասին,
բայց «ժամանակ» չունեցան:

Այս ուղղությամբ կոմյերիտավությունն անդործու-
թյան է մատնված: Կոմյերիտավությունն զբաղվում է նիս-
տերով և շատախոսությամբ: Կոմյերիտավությունը չի կա-
րողանում հաղթահարել իր սեփական շրջանում յեղած ծու-
րությունը:

Իս այնքան ել զարմանալի չէ, յեթե մենք հիշենք,
վոր կոմյերիտական բջիջի քարտուղարները փոփոխվում են

բավական հաճախ և վոր կոմյերիտական կազմակերպու-
թյունը չի կարողացել ժամանակին հակահարված տալ յեն-
թակուրակներին, վորոնք կամենում եյին մեջանելից վերց-
նել կոմյերիտ բջիջի ակտիվ քարտուղարին:

Քարտուղարների փոփոխումն այնքան եւրիզեմիկ է,
վոր կոլխոզային պատի լրագիրը տեղավորել եր այդ առ-
թիվ մի ծաղրանկար, հարցնելով—

—Ընկեր, առա, դու չգիտե՞ս, թե այսոր ով է մեր կոմ-
յերիտական բջիջի քարտուղարը:

Բայց չնայած այս բոլորին, յերիտասարգությունը
հաջողությամբ գլուխ է բերում իր աշխատանքները, մեծա-
մասնությամբ մտել են հարվածային բրիգադների մեջ և
շատ հաճախ ցույց է տալիս աշխատանքային ենտուզիազ-
մի և կայունության որինակներ:

Այնքան ել խիստ չլինենք դեպի յերիտասարգու-
թյունը:

Յերիտասարգությունը քիչ է ազգում կենցաղի վրա,
նա ինքը դեռ չի տերպպետել կենցաղի նոր ձևերին: Բայց
նա չէ՞ վոր վոչ միայն յերիտասարգ է, այլ յեվ կոլխոզային
յերիտասարգ:

Այդ պատճառով, սխալ չի լինի, յեթե ասենք, վոր
կարճ ժամանակից հետո «Կարմիր Հոկտեմբերի» յերիտա-
սարգությունը կուղղի այդ թերությունները և բարձր կու-
տուբական կյանքի սրողը կդառնա կոլխոզում:

«Կարմիր Հոկտեմբերի» յերիտասարգությանը պետք է
ներել: Նա պակաս նվաճումներ չունի և շատ ծառայություն-
ներ ունի հենց թեկուզ նրանով, վոր նպատակ է կոլխոզի
կազմակերպմանը, նպատակ նրա զարգացմանը և թույլ չի
տվել, վոր կոլխոզը քայքայվի այնպես, ինչպես ուրիշ վաչ-
րերում:

Կոլխոզի վարչությունն այս տարի ամենայն լրջու-
թյամբ դրել է արդեն կենցաղի վերակառուցման խնդիրը:

Յեզ վորպես առաջին քայլեր այդ ուղղությամբ, այս տարի հատուցվելու յե հացի փուռ, վորն որական բաց և թողնելու 15 փութ հաց—և մի ընդարձակ բնակարան չքավոր կոլիտոնիկների համար:

* * *

Յես հերանում եմ կոլիտոնից:

Իմ ճանապարհն ընկնում և հեռու:

Մի վերջին անգամ հայացք եմ նետում կանաչավուն լեռներին ու խիտ թփուտներին, վերջին անգամ հրաժեշտ եմ տալիս փոքրիկ Վազգենին, վորն ամաչկոտ կերպով նվիրում է ինձ կաղնու թարմ, կանաչավուն ճյուղը:

Ճանապարհը ձգվում է դեպի վար:

Գետակը նորից ցույց է տալիս կածանի ուղղությունը:

Յերեկո յե դառնում:

Հողնած արևը ծանր նստում է սարերի յետեր:

Որն անհամարձակ քաշվում է դեպի մթնոց շվաքները

Յ գրա հետ միասին ծածկվում է նաև Լոռն:

Ինձ մնում է մտքով նրանց հրաժեշտ տալ և յես առում եմ:—

Մնաս բարև վերին Լոռ...

Մնաս բարև «Կարմիր Հոկտեմբեր»:

Յես դիտեմ, վոր դու կաճես և կդառնաս հզոր, ամուր կայտոց, դու հաջողությամբ կամրապնդես սոցիալիզմը:

ՍՈՉՈՒ ՌԱՅՈՆԻ ԼՈՍՅԻ Գ. ԽՈՐՀՐԳԻ «ԿԱՐՄ. ՀՈԿՏ.» ԿՈՒՆՈՉԻ ԱՌ 1-Ն ՀՈՒՆՎ. 1931 Ք.

ՀԱՇՎՎՆԵՐԻ ԿՈՉՈՒՄԸ	30 թ. ՀՈՒՆՎ. 1-Ն ԿԱՐ		ՇՐՋԱՆ. 30 թ. 1-31		ՍԱԼԳՈՒ ԱՌ 1 ԿՈՆ. ՅԻՔ.					
	ԱԿՏԻՎ	Ռուբ. Կ.	ՊԱՍՄԻՎ	ԿՐԵԳԻՏ	ԱԿՏԻՎ	ՊԱՍՄԻՎ				
1 Գույք	18817	20	22172	54	983	30	40006	44		
2 Նոր կառուցում, հիմ. նորոգ.	2771	190	6374	28	7	32	6366	96		
3 Մթերք. և մատեր.			58385	09	50436	43	10720	56		
4 Փայեր, արժեք.			1236	05			1236	56		
5 Գրամարկ			64329	53	64301	44	28	05		
6 Ընթաց. մուրհակ.			16426	04	11159	31	5267	09		
7 Հաշվեկուսանձինք								33		
8 Հաշվետվություն անդամն. հետ									14741	67
9 Չան. պարտավ. և պարտատերեր			32189	20	46930	87				
10 Անբաժ. ֆոնդ			43871	86	34340	53	9531	33		
11 Հատուկ ֆոնդ					11490	78			16887	74
12 Կապիտալներ					2943	91			2943	91
13 Ավանդներ					17821	46			33014	93
14 Փոխառություն.					100				100	
15 Ծախսումներ					9227	91			5468	51
16 Թերի կատարում					19452	89				
17 Արդյունքներ			70329	83	70329	83				
	21589	10	21589	10	339525	98	339525	98	73156	76
									73156	76

29. Աժրագնդիր խորհուրդները (պիեսա)	10
30. Ուստինով.—Կուլակության վերացումը և խորհրդները խնդիրները	7
31. Բուստեմեջյան.—Համառարած կոլեկտիվացման ավարտումը և 1931 թ. գարնանացանի կամպանիայի խնդիրները	10
32. Կոսիլով.—Բարեկեցյան յերկրորդ գարնան մարտական խնդիր- ները	5
33. Վոսկանյան—1931 թ. գարնանացանի կամպանիայի գործ- նական խնդիրները	5
34. Նոր կենցաղի յերգեր	20
35. Ս. Օոս Լ. Սուսնց.—Բանաստեղծություններ	20
36. Լ. Չաօջարին.—Հացահատիկի ֆաբրիկա («Քիզանտ» սովխոզի մասին)	10
37. Ս. Ս. Սևերեյով.—Կուլտուրական շինարարության խնդիր- ները	7
38. Պ. Յայցեվ.—Գայիերի մոնտալը պիեսա 3 գոր.	25
39. Վ. Մովյան.—Համկոմկուսի (բ) ԿԿ-ի և ԿԿՂ 1930 թ. շեկտեմբերյան պլենումի արդյունքները	5
40. Գյուղասնճես Լ. Վոսկանյան.—Գյուղատնտեսության վա- ստուուները Հյուսիսային Կովկասում և նրանց դեմ կովկու- զիսավոր մեջոցները	15
41 Պ. Վիլսման.—Միլիոնները վտաքի նանհր բյուրոկրատիզմի դեմ պայքարելու	15
42. [Redacted] —Կոլտոգային շինարարության մասին	15
43 Ս. Եպոսեյն.—Կոլտոգը լեռներում	10

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Հյուս. Կովկ. հարկ. պրոլետարիզմի տոսոցիացիայի անդամները գր-
վածքները
 2. 16-րդ կուսամազուժարի արդյունքները
 3. Հյուսիսային Կովկասի հնգամյակը.—արդյունաբերություն:
 4. Խոզարուծության կազմակերպումը կոլտոգում:
 5. Կերի հարցը և սիրտացումը:
 6. Կենդանարուծության ավագ բանվորների պարտականությունները.
 7. Ջեռնարկ ժխտոտադրժության համար:
 8. Ճաղարարուծություն:
 9. Բնջնարուծություն:
 10. Աշխատանքի կազմակերպումը յիվ յեկամաների բաժանումը կոլտո-
գում: Լավագույն կոլտոգների մասին Հյուս. Կովկասում:
 1. Տրանսպորտը և կալսիչը. տեխնիկ
 12. Կոմոսոլը և կուսակցության խնդիրները
- «Իսկի» Ростови -Д., Буденов



71226 0 10 409.

28793

30.519

С. X.

12



СЕВ.-КАВКАЗСК. ОТДЕЛЕНИЕ ЦЕНТРОИЗДАТА

С. Эпштейн

КОЛХОЗ В ГОРАХ

ОЧЕРК

НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ